

**Մեր 4000 գիտնականներից միայն 40-50 հոգին են խնդիր դնող եւ լուծող. Սամվել
Հարությունյան**

Աճպարարությամբ չի կարելի զբաղվել, եթե իրական արդյունք ես ուզում, չի կարելի գիտնականին 100 հազար դրամ վճարել, պիտի այնպիսի գումար տաս, որ նա կարողանա ընտանիքին կերակրել: ԿԳՄՍ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը վստահ է, որ գիտությամբ զբաղվում են մարդիկ, ովքեր «այնքան էլ հասկանալի չեն շրջապատի համար՝ խենթերը», և եթե նրանց տրվի նվազագույնը, որ կարողանան ընտանիք պահել-կերակրել, նրանք Հայաստանից ոչ մի տեղ չեն գնա:

«Այդ մինիմալը մոտ 6 հարյուր դոլարն է: Գիտության մեջ 65-ն անց մարդկանց թիվը 30 տոկոս է, դա պիտի լիներ մոտ 5 տոկոս. իսկ 35-50 տարեկանների թիվը խորը մինիմումն է՝ 10-15 տոկոս: Դա նշանակում է, որ տարեցներից մոտ 200 հոգի ամեն տարի մահանում է, իսկ փոխարինող չի գալիս, մարդ չկա: Եթե այսպես շարունակվի, եթե չլուծենք երիտասարդացման խնդիրը, իսկ դա հնարավոր է միայն բյուջեի մեծացման պարագայում, մենք մի 5-6 տարի հետո ընդհանրապես գիտություն չենք ունենալու: Բյուջեից մեզ հատկացված 12.5 մլրդ դոլարը շատ քիչ գումար է, ԱՄՆ մի լաբորատորիայի բյուջեից քիչ է: Այսպես երիտասարդներին պահել հնարավոր չէ», - ասաց նա:

Բայց գիտության մեջ գումարը ճիշտ է բաշխվում, անցյալ տարվանից ներդրվում է գիտությունն՝ ըստ գիտական արդյունքների ֆինանսավորելու մոդելը, ինչպե՞ս է այն աշխատում՝ հարցերին Հարությունյանն արձագանքում է՝ Ժամանակի խնդիր է. «Հիմա մենք հիմնարկներից հավաքել ենք տվյալները, ու պիտի մշակենք 16 հազար անուն հոդվածներ: Դրանց մեջ կան ֆեյք ամսագրերում տպագրված հոդվածներ: Կա 16 հազար հոդված, որ պետք է ստուգել, բայց մենք չունենք բավական աշխատուժ: Երբ մենք այս ծրագիրը սկսեցինք, չէինք պատկերացնում բարդության աստիճանը: 2020թ-ին չհասցրինք, բայց 2021-ից հաստատ կգործի»:

Ֆինանսավորման այս՝ վարկանշային ձևը գործում է եվրոպական տարբեր երկրներում, սակայն հայկական տարբերակը, ըստ Հարությունյանի, որոշ առանձնահատկություններ ունի, և բավականին հաջող է: «Մենք գնահատում ենք ոչ միայն՝ ըստ տպագրված հոդվածների քանակի և ամսագրերի վարկանիշների, այլ՝ յոթ տարբեր չափանիշներով, որոնցից են՝ հետազոտման էֆեկտիվությունը, հիմնարկների երիտասարդացումը (օրինակ՝ Մատենադարանի միջին տարիքը 35-ից չի անցնում, Էկոլոգոնոոսֆերայինը՝ մոտ 40 տարեկան է): Կարևոր է գիտական աստիճան ունեցող գիտնականների թվաքանակը, որը նշանակում է, որ այս հիմնարկում ռեալ գիտական աշխատանք է արվում, թեկնածուների և դոկտորների հարաբերակցությունը. եթե դոկտորների թիվը մեծ է, նշանակում է՝ պարբերաբար բովանդակային լավ աշխատանքներ են կատարվում: Կարևոր են նյութատեխնիկական բազայի առկայությունը, հիմնարկի ինտեգրվածությունը համաաշխարհային գիտական աշխարհին, կրթական գործունեության իրականացումը,

գիտական արդյունքի առևտրայնացման հեռանկարները, ֆինանսական էֆեկտիվությունը՝ քանի գրանտ է կարողացել շահել: Բոլոր այն գործոնները, որ կարող են բարձրացնել հիմնարկի գիտական աշխատանքի էֆեկտիվությունը, բոլորը վերածում ենք միավորների, որոնցով էլ պիտի հիմնարկը ստանա իր ֆինանսավորումը»:

Վերջերս տնտեսագիտականի ուսանողներն իրենց՝ գրագողության մեջ մեղադրվող նախկին ռեկտորի վերադարձը պահանջելիս նշում էին, թե ո՛ւմ աշխատանքն ուզում էք, նայեք, նույնքան և ավելի անբարեխիղճ արտագրություններ կգտնեք. իրո՞ք գիտական աշխատանքների վիճակն ընդհանուր առմամբ այդպիսին է՝ հարցը, ըստ Հարությունյանի, միանգամայն տեղին է. գրագողության ավանդույթը հիմնավորվել է գիտական որոշ ոլորտներում. «Ցավոք, Հայաստանում որոշ ոլորտներում արտագրությունները տրադիցիայով շատ-շատ են՝ հատկապես հումանիտար ոլորտներում, տնտեսագիտության մեջ: Մինչև ԲՈԿ-ի նոր նախագահի՝ Սմբատ Գոգյանի նշանակումը տարեկան պաշտպանվում էր մոտ 500 դիսերտացիա: Հիմա պաշտպանվում են մոտ 200-ը: Դա լավ թիվ է»:

Նա նշում է, որ այս աշխատանքները գրվում են հիմնականում դրամաշնորհներով. «Մենք տարեկան տալիս ենք մոտ 250 գրանտ: Եթե համարենք, որ այդ 250-ով էլ բարձր մակարդակով մեկական դիսերտացիա են պաշտպանվում, նշանակում է 250-ից ավելի դիսերտացիաներ չպիտի պաշտպանվեին: Դա նշանակում է, որ 200-250-ը «բրակ» են եղել՝ հիմնականում, տնտեսագիտության, մանկավարժության, ցավոք՝ բժշկական գիտությունների, իրավագիտության ոլորտներում: Տնտեսագիտությունից տարեկան 120 դիսերտացիա է պաշտպանվել, հետո էլ՝ մոտ 15 դոկտորական: Բա ինչի՞ է մեր տնտեսությունն այսպես վատ վիճակում եղել»:

Գրագողության դեմ պայքարը, գիտնականի խոսքով, շատ բարդ է, քանի որ այլոց՝ վերաշարադրված մտքերը համակարգչային ծրագրերը չեն որսում: «Անտիպլագիատ ծրագրերը չեն գտնում դրանք: Բայց դրա հիմքն ուրիշ տեղ է: Ամեն քայլափոխին հայտարարություններ են՝ գրում ենք կուրսային աշխատանքներ, դիպլոմային աշխատանքներ, բա ԱԱԾ-ն ինչո՞վ է զբաղված: Ինչո՞ւ չի կանխում սա», - հարցնում է նա:

Այն հարցին, թե որպես ոլորտի համակարգող՝ ի՞նքն ինչ միջոցառումներ է ձեռնարկում, պատասխանում է. «Դա իմ կանոնադրական լիազորությունների մեջ չի մտնում: Եթե մտներ, հերները կանիժեի: Դա ոստիկանության, բուհերի լիազորությունների մեջ է: Մենք ասպիրանտական տեղերի պետական պատվերի առաջարկի ձևն էինք ներկայացրել. այնպիսի փաստաթուղթ, որ նման բաները բացառվեն: Մենք հստակ ունենք հաշվարկ, թե տարեկան քանի ֆիզիկոս է պետք, քանի՝ տնտեսագետ: Եվ հաշվարկն այնպես է դրված, որ 100 տնտեսագետ ընդունելու հավանականությունը դառնում է զրո»:

Ա՞յս հիմքով է փորձ արվում օպտիմալացնել՝ կրճատել գիտական կենտրոնների և գիտաշխատողների թիվը. Հարությունյանը հերքում է. «Գիտաշխատողների թիվը չենք կրճատում. նրանք կշարունակեն աշխատել կից հիմնարկներում: Մեր փոքրիկ, պատերազմող երկրում ունենք ֆիզիկայի 6 ինստիտուտ, որ գրեթե նույն խնդիրներով են զբաղվում, քիմիայի՝ 4, կենսաբանության 4 ինստիտուտ ունենք, հայագիտական լեզվի, պատմության, արևելագիտության ինստիտուտներ ունենք, որ համարյա նույն

բաներով են զբաղվում: Նույն ԵՊՀ-ի 19 ֆակուլտետի զգալի մասն իրար կրկնում են՝ օրինակ, ֆիզիկայի և ռադիոֆիզիկայի ֆակուլտետներ. նույն ֆիզիկան է»:

Նա հավաստում է, որ ինստիտուտների միավորումը՝ ղեկավարների, ադմինիստրացիայի, շենքերի պահպանման ծախսերի կրճատման համար, շատ ավելի շուտ էր պետք անել. «Նման առաջարկությունն արել եմ բոլոր վարչապետներին: Ցավոք, նախկին իշխանությունները համարձակություն չունեցան լուծել այս խնդիրը: Փառք տանք Աստծուն, որ այս իշխանությունը ստանձնել է այն: Եթե ուզում ենք լուրջ բարեփոխումներ անենք, պիտի մի քիչ ռիսկով լինենք, դուխով՝ ոնց որ ընդունված է հիմա: Եթե գիտես ու ապացուցում ես, որ ճիշտը սա է, պիտի դուխով գնաս ու տանես առաջ»:

Դեռ 2012 թվին, ըստ Հարությունյանի, գիտության կոմիտեն ներկայացրել է գիտության երիտասարդացման ծրագիր, բայց տարբեր պատճառներով այն չի ընդունվել, հիմա գործում են միայն օժանդակ ծրագրեր. «Գրանտային ծրագրերում պետք է լինի նվազագույնը մեկ մինչև 35 տարեկան գիտնական: Եթե չկա մինչև 35 տարեկան, մենք այդ ծրագիրը՝ որպես տեխնիկական բրակ, ընդհանրապես չենք դիտարկում: Ասպիրանտներն ու հայցորդները, որ գրեթե պատրաստ են պաշտպանվելու, օգնում ենք, որ մասնակցեն գիտաժողովների, գնեն համակարգիչներ՝ մոտ 1.5 մլն դրամ է տրամադրվում: Ունենք երիտասարդների թիմային ծրագիր՝ 4 հոգուն 2 տարվա համար 13 մլն դրամ ենք տրամադրում. կան այլ ծրագրեր էլ, բայց դրանք ներդրումներ են պահանջում»:

Հարությունյանը թվարկում է ոլորտի խնդիրները. ինստիտուտների ղեկավարների մեծ մասը չունի մենեջարական հմտություն՝ հասարակ բյուջե կազմել չեն կարողանում: Ինչու են շարունակում պաշտոնավարել հարցը վերահասցեագրում է ԳԱԱ ղեկավարին: «Չնայած, կարծես, այս ոլորտում որոշ երիտասարդներ դարձան տնօրեն,- փորձում է հիշել,- ո՞ւմ օրինակ բերեմ՝ Պապոյան Արամը, չնայած ինքն էլ 60 տարեկան է»: Ինստիտուտների ռազմավարական ծրագրերը, նշում է գիտնականը, պիտի մեկը մյուսից բխեն, բայց դրանք շատ հաճախ իրար հակասում են: «Հաճախ նայում ես, ասում ես՝ չեն կարող էս երկուսը լինել նույն պետության ռազմավարական ծրագրեր: Կառավարման համակարգում այսպիսի թերություններ կան»:

Հարցին, թե որքանով է իրատեսական վարչապետի դիտարկումը՝ միայն սուրճ խմող գիտնականների մասին՝ Հարությունյանը պատասխանում է. «Մեր ժողովրդի մի ստվար հատվածը՝ իրենց լուրջ մարդ համարողները, կարևորն ու երկրորդականը չեն տարբերում իրարից: Չեմ հասկանում, Փաշինյանի ասածի մեջ ի՞նչ տարօրինակ բան կար: Սուրճ խմելն այդպիսի վա՛տ բան ա: Իմ բոլոր լավ գաղափարները առաջացել են սուրճ խմելիս, բոլոր լավ հոդվածները գրել եմ սուրճ խմելով ու ծխելով», - ասաց նա:

Հարությունյանի դիտարկմամբ՝ հնարավոր չէ, որ որևէ երկրի գիտական ոլորտում լինեն միայն լավ գիտնականներ. ամենուր նրանք գիտական ոլորտի միայն մեկ քառորդն են կազմում. այդպես և մեզ մոտ է: Հայաստանում, ներկայացրեց Հարությունյանը, գիտության պետական կոմիտեում գրանցված է մոտ 6100 աշխատող, որոնցից գիտնական են 4000 հոգին, մյուս 2100-ը տեխնիկական աշխատողներն են՝ պահակներ, հավաքարարներ:

«4000-ի մոտ 25 տոկոսը քիչ թե շատ ակտիվ աշխատող գիտնականներն են, որ պարբերաբար հրապարակվում են, և մեր գիտական հանրույթին ներկայացնում են բավական լավ գիտական արդյունքներ: ԱՊՀ տարածքում մեր գիտաչափական պարամետրերով Հայաստանը բավական լավ արդյունքներ ունի: Բայց դրանցից գիտնական կարելի է համարել շատ քչերին: Սրանք գիտության ոլորտի աշխատողներ են, բայց գիտնական գաղափարը շատ բարդ և պատվաբեր գաղափար է: Վիկտոր Համբարձումյանն ասում էր. «Հազարի միջից, որ գիտության մեջ են, կարող է միայն մեկ-երկուսը լինեն գիտնական»։ Գիտնականն այն մարդն է, որ ի վիճակի է խնդիր դնել և լուծել: Խնդիր դնողները շատ քիչ են լինում: Հնարավոր չէ պատկերացնել, որ մեր 4000-ն էլ լինեին խնդիր լուծող. գիտե՞ք ինչ հարուստ երկիր կլինեինք: Գիտության մեջ գոյություն ունի H ֆակտոր, որը ցույց է տալիս քո գիտական աշխատանքների ընթերցվածության աստիճանը: Արտերկրում գիտական շրջանակների կողմից ընդունվելու նվազագույն նշաձողը H ֆակտորի 5 լինելն է. Հայաստանում ունենք այդպիսի մոտ 400 գիտնական, որոնց H ֆակտորը 5 է: Մեր 4000-ից միայն 40-50 հոգին են խնդիր դնող: Բայց նրանց այն մյուսների ֆոնն էլ է պետք: Դա անհրաժեշտ է: Դա կա նաև ԱՄՆ-ում, որտեղ գիտությունը բավական լավ վիճակում է: Այս մյուսները խնդիր դնող մարդկանց ծառայող մարդիկ են: Եվ նրանք գալիս են, կատարում են իրենց հանձնարարականը և գնում են: Եվ նրանց մեջ են նաև այն մարդիկ, որոնց օրը սկսում է սուրճով ու դրանով էլ ավարտվում է. սա նորմալ է: Ամբողջ աշխարհում ընդունված բան է,- ասաց Հարությունյանը՝ եզրափակելով,- լիքը խնդիրներ կան, նստել են կոֆեի բաժակից են խոսում»:

Կարմեն Մարտիրոսյան